ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 377 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N 157-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակեր–պության կողմից (ՀՎՀՀ՝ 00904586) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրա-պետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 1-ի «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնի թողունակության մեծացում» ծրագրի մասին» N 157-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԴԸ ՀՈՌԵԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02643751) 2025 թվականի մայիսի 21-ին կնքված՝ N ԴՀ-21/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խոհանոցային սարքավորումների ձեռքբերում՝ 8,316,298 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նիկոլ Դուման» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2025 թվականի մայիսի 23-ին կնքված՝ N ՆԴ-23/05 պայմանագրում նշված գործարքը, որով

նախատեսվում է երկու հատ նստարանի, չորս հատ ծաղկամանի և երկու հատ աղբամանի ձեռքբերում՝ 891,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ